Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի
նոյեմբերի 29 -ի N 838 - Ա որոշման

# «ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՆԱԶՈՒՐԿ ԵՎ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ տարածքում տնազուրկ և տան վերանորոգման կարիք ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավում: |
| 2. | Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը | Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Կարմիր խաչի միջազգային կոմիտե՝ (ԿԽՄԿ) ներդնում է 56 200 000 դրամ, «Fuller center for Housing» միջազգային բարեգործական հասարակական կազմակերպություն՝ 460 000 000 դրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Ֆուլեր» տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Ա. Տիգրանյան 53, բն. 26, ՀՎՀՀ՝ 01009537) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում. քաղաքաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 516 200 000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ տարածքում ընտանիքներ, որոնք չունեն բնակարան, կամ ունեն անավարտ կամ վերանորոգման անհրաժեշտություն ունեցող տուն: Նրանց ընտրությունը կատարվում է «Ֆուլեր» տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ուսումնասիրությունների արդյունքում: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2019 թ. նոյեմբերի 22-ից մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը |

<table>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>Կազմակերպությանը դիմած ընտանիքների ցուցակներից կատարվում է ընտանիքների ընտրություն՝ առաջնությունը տալով առավել կարիք ունեցողներին: Ընտրված ընտանիքների հետ կնքվում են փոխառության և հիփոթեքի պայմանագրեր՝ անտոկոս փոխառություն տրամադրելու միջոցով բնակարանային պայմանները բարելավելու համար, ապա սկսվում է ֆինանսավորումը փուլ առ փուլ: Ընթացքում ներգրավվում են միջազգային և տեղական կամավորներ, որոնց համար կազմակերպությունը կազմակերպում է շինարարական օրեր ընտանիքներին օգնելու համար: Այս գործընթացի համար կազմակերպությունը կարիք ունի փոքր բեռնատարի՝ անհրաժեշտ շինարարական գործիքներ (բետոնախառնիչներ, բահեր, հենածուներ, հոսանքի գեներատոր և այլ սարքավորումներ) և շինանյութեր տեղափոխելու համար: Այս ծախսերը չեն ներառվում փոխառության գումարի մեջ: Ծրագրի արժեքը 516 200 000 դրամ է, որն ունի հետևյալ բացվածքը՝<br>- դրամական փոխառությունների տրամադրում – 413 430 000 դրամ<br>- կազմակերպական ծախսեր – 102 770 000 դրամ, որից բեռնատար մեքենայի գնում և ներմուծում՝ Mitsubishi Canter 3C13 33.5 – 6 500 000 դրամ – միայն բեռնատար մեքենայի գործարքի համար ակնկալում ենք հարկային արտոնություններ</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td><table>
<tr><td>1.</td><td>Մեքենայի ձեռքբերում և ներմուծում</td><td>6 500 000</td></tr>
<tr><td>2.</td><td>Հաղորդակցության միջոցների գնում</td><td>750 000</td></tr>
<tr><td>3.</td><td>Գործուղումներ (արտերկրում դրամահավաք իրականացնելու և ՀՀ տարածքում ընտանիքների հետ աշխատելու համար)</td><td>2 940 000</td></tr>
<tr><td>4.</td><td>Տրանսպորտային միջ. պահպանում և վերանորոգում</td><td>3 700 000</td></tr>
<tr><td>5.</td><td>Կոմունալ ծառայություններ</td><td>1 300 000</td></tr>
<tr><td>6.</td><td>Գրասենյակի վարձակալություն և սպասարկում</td><td>9 300 000</td></tr>
<tr><td>7.</td><td>Հաղորդակցություն և գովազդ</td><td>1 800 000</td></tr>
<tr><td>8.</td><td>Բանկային ծախսեր</td><td>1 180 000</td></tr>
<tr><td>9.</td><td>Այլ (փաստաբանական, ժողովներ, ներկայացուցչական և այլն)</td><td>3 200 000</td></tr>
</table></td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման համար կազմակերպական ծախսերը կազմում են 102 770 000 դրամ, որը ունի հետևյալ բացվածքը՝</td></tr>
</table>

<table>
<tr><td></td><td></td><td>
<table>
<tr><td>1.</td><td>Աշխատավարձի ֆոնդ</td><td>72 100 000</td></tr>
<tr><td>2.</td><td>Մեքենայի ձեռքբերում</td><td>6 500 000</td></tr>
<tr><td>3.</td><td>Հաղորդակցության միջոցների գնում</td><td>750 000</td></tr>
<tr><td>4.</td><td>Գործուղումներ (արտերկրում դրամահավաք իրականացնելու և ՀՀ տարածքում ընտանիքների հետ աշխատելու համար)</td><td>2 940 000</td></tr>
<tr><td>5.</td><td>Տրանսպորտային միջ. պահպանում և վերանորոգում</td><td>3 700 000</td></tr>
<tr><td>6.</td><td>Կոմունալ ծառայություններ</td><td>1 300 000</td></tr>
<tr><td>7.</td><td>Գրասենյակի վարձակալություն և սպասարկում</td><td>9 300 000</td></tr>
<tr><td>8.</td><td>Հաղորդակցություն և գովազդ</td><td>1 800 000</td></tr>
<tr><td>9.</td><td>Բանկային ծախսեր</td><td>1 180 000</td></tr>
<tr><td>10.</td><td>Այլ (փաստաբանական, ժողովներ, ներկայացուցչական և այլն)</td><td>3 200 000</td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="2">Ընդամենը՝</td><td>102 770 000</td></tr>
</table>
Կազմակերպական ծախսերը չեն գերազանցում ծրագրի 20%-ը:
</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ՏԻՄ-երի և «Fuller center for Housing» միջազգային բարեգործական հասարակական կազմակերպության հետ</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Հաշվետվություններ են ներկայացվում Կարմիր խաչի միջազգային կոմիտեին, «Fuller center for Housing» միջազգային բարեգործական հասարակական կազմակերպության գլխամասային գրասենյակին, ինչպես նաև Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին՝ սահմանված կարգով:</td></tr>
</table>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ